ող անցնել իր հիւրերի, շքախմբի, սրանց ընտանիքների, թիկնապահների, զօրքի եւ բազմաթիւ սպասաւորների հետ եւ միայն դարնան այնտեղից հեռանալ։

Դենպետ եւ թագաւոր Արշակունին եւ նրա շքախմբի բոլոր անդամները առանց իրենց կանանց օտարի յարկի տակ չէին կարող մնալ ամիսներով. Զրադաշտական օրէնք եւ պարտաւորութիւն էր նոյն իսկ պատերազմի դաշտումն էլ կանայք իրենց ամուսինների հետ էին գնում։ Իսկ Հայաստանի թագաւորը, Արշակունի դահակալը ո՛չ միայն օրէնքների դէմ չէր կարող գործել, այլ առանց 2000 հոգով շքախմբի՝ տեղից չէր կարող շարժուել։ Ուտիքի-Նուխու Խալխալի հեռաւորութիւնը եւ հնութիւնների բացակայութիւններն նկատի առնելով, Սեւանի լճի հիւսիս-արեւելեան լեռներում եւ Ծեղամ առուակի ափին գտան մի ինչ որ Խէյլիխանա գեղ, ենթադրեցին, թէ դա պիտի լինի Խալխալը. բայց ո՛չ ոք չէգտեց մօտենալու իսկական Խալխալին, Ճորոխի Փեսունջուր առուակի ափին հիմնուած այն ոստանին, որը մինչեւ օրս կրում է հնութեան ամէն նշանները։

Եթէ Անակի Հայաստան գալու պայմանները հետազօտենք, պիտի համոզուենք, որ Անակը անկասկած Փեսունջուրի Խալխալն եկաւ, գտաւ տոհմակցին իր վիճած կալուածքում, այն վիճակում, որն իր պապե-